

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Բրիտանական Եկեղեցիների Խորհուրդը, որին անդամակցում են Անգլիայի բոլոր քրիստոնեական Եկեղեցիները (Անգլիկան, Կաթոլիկ, Ռեֆորմիստ, Սկրտչական, Մեթոդիստ), Ռուս Ուղղափառ Եկեղեցու հրավերով տասնինը հոգուց բաղկացած մի խումբ ուղարկեց Մոսկվա մայիսի 17-ին: Սա պատասխան էր 1983 թ. Սովետական Միության քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչների Անգլիա այցելության (որի կազմում էր նաև գերշ. Տ. Ներսես եպս. Պոլսպայլանը): Այցելությունների նպատակն է՝ ծավալել շփումը աշխարհի բոլոր քրիստոնեական Եկեղեցիների միջև և միատեղ աղոթել ու գործել հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության:

Խումբը ղեկավարում էր Յորքի եպիսկոպոս Ջոն Հըֆգուդը:

Մոսկվայում խումբը բաժանվեց երեք մասի. մի մասը մեկնեց Լենինգրադ և Ռիգա, երկրորդը՝ Տուլա, Վլադիմիր և Սուզդալ, իսկ երրորդը՝ Բաքու, Էջմիածին:

Երրորդ խումբը բաղկացած էր վեց հոգուց՝ վերապատվելի Ֆիլիպ Մորգան (Ռեֆորմիստական Միացյալ Եկեղեցի), տիկ. Ռութ Մակ-Քերն (Անգլիկան Եկեղեցի), պատվելի Դեյվիդ Ջոունս (Ռեֆորմիստ), պատվելի Գրեհամ Ֆորբես (Շոտլանդիայի Եպիսկոպոսական Եկեղեցի), կանոնիկ Պոլ Օստրայխեր (Անգլիկան) և Կրոնական գործերի Հատուկ թղթակից տիկ. Ռոզեմարի Հարթիլը, ժամանեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին մայիսի 21-ին: Որպեսզի հյուրերն առիթ ունենան ավելի մոտիկից ծանոթանալու Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն և վերածնված Մայր Հայաստանին, նրանց համար մի հատուկ ծրագիր կազմվեց: Ըստ այդ ծրագրի հյուրերը եղան Խորվիրապում, Գառնիում, Գեղարդում, Ծիծեռնակաբերդում, Մատենադարանում, Երեբունու և Հայաստանի պատմության թանգարաններում, Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերում, Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, որտեղ հաճույքով դիտեցին Հայաստանի պարի պետական անսամբլի ելույթը, ծանոթացան Ս. Էջմիածնի կառույցներին և տեսարժան վայրերին, այցելեցին «Ալեք և Մարի Մանուկյան գանձատուն», Մայր տաճար, Վեհարան, հանդիպում ունեցան հոգևոր ճեմարանի տեսչի և ուսանողության հետ:

Մայիսի 23-ին Վեհարանի ընդունելությունների սրահում հյուրերին ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Ընդունելությանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլսպայլանը, հոգևոր ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը: Հյուրերից վերապատվելի Ֆիլիպ Մորգանը իր և խմբի անունից երախտագիտություն հայտնեց ջերմ հյուրընկալության համար և ավելացրեց. «Մեր այցելության օրերին ուր որ էլ եղանք, մեծ բավականությամբ ու հիացմունքով ծանոթացանք Հայաստանի հնություններին, փառավոր քաղաքակրթությանը և նաև ներկային. հայ ժողովուրդը հաստատ քայլերով ընթանում է դեպի լուսավոր ապագան»:

Մայիսի 24-ին հյուրերը հրաժեշտ տվեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ու ծաղկյալ Հայաստանին:

ՊՍԱԿ ԱԲԵՂԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ